Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 12-ի N 1318 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) մասնակցության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է փորձաքննվող անձի համաձայնության կամ ցանկության դեպքում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին որպես դիտորդ՝ ապահովելով այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

3. Կազմակերպությունները հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում՝

1) հայտ՝ համաձայն ձևի.

2) իրենց կողմից լիազորված ներկայացուցիչների ցուցակը (այսուհետ՝ ցուցակ), որում ներառվում են կազմակերպության ներկայացուցչի (ներկայացուցիչների) անունը, ազգա-

նունը, հասարակական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

3) կազմակերպության կանոնադրությունը և (կամ) կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի նկարագրությունը, որը հավաստում է հաշմանդամության ոլորտում տվյալ կազմակերպության առնվազն 2 տարվա գործունեության փաստը:

4. Նախարարությունը հայտն ընդունելուց հետո մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրում է սույն կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերը և ցուցակը տեղադրում նախարարության պաշտոնական կայքէջում (www.mlsa.am), որից հետո կազմակերպության ներկայացուցիչներն իրավունք ունեն մասնակցելու փորձաքննություններին:

5. Հանձնաժողովները կազմակերպության ներկայացուցիչների մասին տեղեկանում են նախարարության պաշտոնական կայքէջից:

6. Նոր կազմակերպությունների կողմից հայտ ներկայացվելու դեպքում նախարարությունը համալրում է կայքէջում տեղադրված ցուցակը՝ սույն կարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխան:

7. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահանջները չկատարելու դեպքում նախարարությունը մերժում է կազմակերպության հայտը:

8. Կազմակերպությունները երեք տարին լրանալուց հետո մեկ ամսվա ընթացքում վերահաստատում են իրենց ներկայացուցչի (ներկայացուցիչների) թեկնածությունը կամ ներկայացնում են այլ ներկայացուցչի (ներկայացուցիչների) թեկնածություն՝ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

9. Հանձնաժողովը փորձաքննությանը կազմակերպության ներկայացուցչի մասնակցելու իրավասության վերաբերյալ փորձաքննվող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին իրազեկում է բժշկասոցիալական փորձաքննության դիմումն ընդունելիս:

10. Փորձաքննվող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը փորձաքննության օրը տալիս են իրենց գրավոր համաձայնությունը կազմակերպության ներկայացուցչի մաս-

նակցելու վերաբերյալ: Գրավոր համաձայնությունը կցվում է «վարչական վարույթին (բժշկասոցիալական փորձաքննական գործին)»:

11. Կազմակերպության ներկայացուցիչը փորձաքննություններին մասնակցելու համար ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

12. Անձի բժշկասոցիալական փորձաքննությանը կարող է մասնակցել հասարակական կազմակերպության առավելագույնը երկու ներկայացուցիչ:

13. Կազմակերպությունները հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկանում են նախարարության պաշտոնական կայքէջից:

14. Կազմակերպությունների ներկայացուցիչները հանձնաժողովի կողմից իրականացվող փորձաքննությանը մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

15. Դիտորդն իրավունք ունի հանձնաժողովին ներկայացնել իր գրավոր դիտարկումները, կատարել գրառումներ:

16. Դիտորդն իրավունք չունի միջամտելու հանձնաժողովի աշխատանքներին:

17. Դիտորդը պարտավոր է օրենքով սահմանված կարգով պահպանել անձի վերաբերյալ անձնական տվյալներ հանդիսացող տեղեկատվության գաղտնիությունը:

18. Փորձաքննվող անձը փորձաքննության ցանկացած պահի կարող է հրաժարվել դիտորդի մասնակցությունից:

19. Կազմակերպությունները կարող են վերլուծել իրենց ներկայացուցիչների մասնակցության արդյունքները և համապատասխան դիտարկումներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N 98-Ն որոշմամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև

Հ Ա Յ Տ

ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

_____
(կազմակերպության անվանումը)

_____
(կազմակերպության գտնվելու վայրը և կապի միջոցները (հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ էլեկտրոնային հասցեն)

_____

_____
(կազմակերպության գործունեության ոլորտը և հիմնադրման ամսաթիվը)

Կից ներկայացվող փաստաթղթերը.

1)_____

2)_____

3)_____

4)_____

5)_____

Կազմակերպության
ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (պաշտոնը, անունը, ազգանունը)

_____ _____ 20____թ.